Հավելված N 1
ՀՀ կառավարության 2024 թվականի
օգոստոսի 29-ի N 1388-Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

ՔՍԱՆՀԻՆԳ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ

1. Ընդհանուր տեղեկություններ պետական սեփականություն հանդիսացող գույքի (այսուհետ՝ տարածք) բարելավման ծրագիր իրականացնող կազմակերպության մասին

1.1. կազմակերպության լրիվ անվանումը՝ <<Նեքսթ Ջեն Սպորտս>>,

1.2. կազմակերպության ձևը՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն ,

1.3. կազմակերպության ստեղծման (վերակազմակերպման) ժամկետը՝ Ընկերությունը ստեղծվել է 2024թ. փետրվարի 7-ին,

1.4. կազմակերպության գրանցման վկայականի համարը՝ 269.110.1368932,

1.5. գրանցման վայրը և տարեթիվը՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Գարեգին Նժդեհ փ. 34, 2024թ.,

1.6. գործունեության իրականացման վայրը (նստավայրը)՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Գարեգին Նժդեհ փ. 34.,

1.7. փոստային հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Գարեգին Նժդեհ փ. 34, 006,

1.8. նույնականացման ծածկագիրը՝ 54563549, հարկ վճարողի հաշվառման համարը՝ 02315867,

1.9. տարածքի բարելավման ներդրումային ծրագիրը հաստատվել է <<Նեքսթ Ջեն Սպորտս>> ՍՊ ընկերության միակ մասնակցի համար 5 առ. 23.04.2024թ. որոշմամբ:

Գործադիր տնօրեն՝ Ալֆրեդ Սադոյան, հեռ. +37494090999,

Հաշվապահական ծառայության ղեկավար՝ Աշոտ Գրիգորյան, հեռ. +37477474192,

1.10. այլ տվյալներ (հեռախոս/ֆաքս, էլեկտրոնային հասցե, վեբ կայքեր) Էլեկտրոնային հասցե՝ ngensports@gmail.com, վեբ կայք՝ ngensports.com,

2. Կազմակերպության գործունեության նպատակները և խնդիրները

2.1. կազմակերպության նպատակներն են՝

Կազմակերպության հիմական խնդիրը և նպատակը Հայաստանի Հանրապետությունում մանկապատանեկան ֆուտբոլի զարգացումն է: Այդ նպատակով ընկերությունը մտադրված է Երևան

քաղաքի Ավան, Աճառյան փողոց 20/4 հասցեի տարածքում հիմնել սպորտային համալիր՝ իր ենթակառուցվածքներով:

1) Կառուցել միջազգային չափանիշներին համապատասխան ֆուտբոլային ակադեմիա և ենթակառուցվածքներ, որոնք իրենց մեջ կներառեն ֆուտբոլային խաղադաշտեր, վերականգնողական զոնա, մարզասրահ, լողավազան և այլն: Սպորտային համալիրը հագեցած կլինի նորարարական ֆուբոլային տեխնոլոգիաներով:
2) Նոր հնարավորություններ ստեղծել հայ պատանի ֆուտբոլիստների համար դեպի եվրոպական ակումբներ տեղափոխվելու: Հայ մարզիկները մշտապես կլինեն եվրոպացի սկաուտների ուշադրության կենտրոնում:
3) Ակադեմիայում մարզումներն իրականացվելու են միջազգային լավագույն փորձն ունեցող մարզական ծրագրերով:
4) Ներգրավվել եվրոպացի մարզիչներ, դիետոլոգներ և ֆուտբոլային անալիտիկներ:
5) Հնարավորություն տալ հայ մարզիկներին արտերկրում խաղային պրակտիկա ձեռք բերելու բավականին երիտասարդ հասակից:
6) Մարզումների ժամանակ հավաքագրել մարզումային տվյալներ, որոնք նոր հնարավորություններ կստեղծեն ինչպես մարզիկների, այնպես էլ մարզիչների համար ֆուտբոլում արդյունավետությունը բարձրացնելու, նոր հաջողությունների հասնելու և վնասվածքներից հնարավորինս խուսափելու համար: Օգտագործվելու է աշխարհում առկա ֆուտբոլային ամենավերջին տեխնոլոգիաները, մասնավորապես՝ GPS սարքեր, միկրոչիպեր և տվյալներ հավաքագրող գաջեթներ:
7) Հնարավորություն ստեղծել առավել տաղանդավոր մարզիկներին անվճար հաճախել ակադեմիա: Նրանց ընտրությունն իրականացվելու է եվրոպացի մարզիչների կողմից:
8) Ավելացնել ՀՀ-ում օգտագործվող արդի և միջազգային չափանիշներին համապատասխանող ֆուտբոլային ենթակառուցվածքների թիվը:
9) Հիմնել ֆուտբոլային թեմայով նախադպրոցական տարիքի երեխաների հասարակական դաստիարակության հիմնարկ:
10) Անհատույց օգտագործման տրվող տարածքում կառուցել հյուրանոց-կացարան, որը հնարավորություն կընձեռի մարզերում բնակվող և ֆուտբոլով զբաղվող առավել տաղանդավոր երեխաներին այցելել մարզումների Երևանում գործող ֆուտբոլային ակադեմիա, որտեղ բնակվելու են նաև արտերկրից ժամանած ֆուտբոլային մարզիչներ: Հյուրանոցը հասանելի կլինի ֆուտբոլային թիմերի և օտարերկրյա զբոսաշրջիկների համար:
11) Խթանել կանանց ֆուտբոլի զարգացմանը և ֆուտբոլում կանանց ու աղջիկների ներգրավվածության թվի ավելացմանը: Ակադեմիայում կգործեն հատուկ խմբեր կանանց և աղջիկների համար:
12) Խթանել արդար խաղը և այն միավորող, կրթական, մշակութային և մարդասիրական արժեքները՝ դա իրականացնելով, մասնավորապես, երիտասարդական, մանկապատանեկան և զարգացման ծրագրերի միջոցով:
13) Նպաստել Հայաստանում զբոսաշրջության զարգացմանը: Ակադեմիայի տարածքում նախատեսվում է իրականացնել շրջայց ակադեմիայի ենթակառուցվածքներ՝ ֆուտբոլի խաղադաշտեր, հանդերձարաններ, մամլո ասուլիսների սրահ, սպորտային խանութ-սրահ, սրճարան-սպորտային բար:
14) Ծրագիրը ունենալու է նաև կրթական բաղադրիչ: Տեղում, ինչպես նաև առցանց ձևաչափով կազմակերպվելու են դասընթացներ տեղի հայ մարզիչների որակավորումը բարձրացնելու համար:

Հայաստանի Հանրապետությունում մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման նպատակով

<<Նեքսթ Ջեն Սպորտս>> ՍՊ ընկերությունը 2024թ. ապրիլի 2-ին պայմանագիր է կնքել աշխարհահռչակ իտալական Թուրինի <<Յուվենտուս>> ֆուտբոլային ակումբի հետ՝ Հայաստանի Հանրապետությունում Յուվենտուս ֆուտբոլային ակադեմիա հիմնելու վերաբերյալ:

3. Կազմակերպության կողմից ներկայացվող տարածքի անբաժանելի բարելավման ներդրումային ծրագիրը

3.1. ներդրումային ծրագրի ընդհանուր նկարագիրը, հիմնական նպատակը և լուծման ենթակա խնդիրները

Ներդրումային ծրագրի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում մանկապատանեկան ֆուտբոլի զարգացումն է: Այս նպատակով ընկերությունը մտադրված է Երևան քաղաքի Ավան, Աճառյան փողոց 20/4 հասցեում հիմնել սպորտային համալիր իր ենթակառուցվածքներով: Ծրագիրը լավագույնս իրագործելու համար <<Նեքսթ Ջեն Սպորտս>> ՍՊ ընկերությունը 2024թ. ապրիլի 2-ին պայմանագիր է կնքել աշխարհահռչակ իտալական Թուրինի <<Յուվենտուս>> ֆուտբոլային ակումբի հետ՝ Հայաստանի Հանրապետությունում Յուվենտուս ֆուտբոլային ակադեմիա հիմնելու վերաբերյալ: <<Յուվենտուս>> ֆուտբոլային ակումբի հետ կնքված պայմանագրի գործողության դադարեցման դեպքում սպորտային համալիրը կշարունակի ծառայել իր հիմնական նպատակի համար:

Ծրագիրը հնարավորություն կտա ակադեմիա հաճախող յուրաքանչյուր սանի մարզվել միջազգային լավագույն փորձն ունեցող մարզական ծրագրերով, ձեռք բերել արտերկրում ֆուտբոլային խաղային պրակտիկա: Ծրագրի իրականացումը կնպաստի ՀՀ-ում միջազգային բարձր չափանիշներին համապատասխանող ֆուտբոլային ենթակառուցվածքների ավելացմանը, կմեծանա պրոֆեսիոնալ ֆուտբոլով զբաղվող պատանիների թիվը, կնպաստի պրոֆեսիոնալ ֆուտբոլում կանանց և աղջիկների ներգրավվածության թվի ավելացմանը: Կպատրաստվեն նոր պրոֆեսիոնալ կադրեր Հայաստանի ֆուտբոլի ազգային տարբեր տարիքային հավաքականների համար, բազմաթիվ պատանիների հնարավորություն կընձեռվի խաղալ արտերկրում: Ծրագրում կրթական բաղադրիչի շնորհիվ կավելանա Հայաստանում որակավորում ունեցող մարզիչների թիվն, իսկ արդեն որակավորում ունեցող մարզիչներին հնարավորություն կընձեռվի բարձրացնել իրենց որակավորման աստիճանը: Ծրագրի իրականացումը կնպաստի սպորտի մասսայականացմանը մեր երկրում, ինչպես նաև ֆուտբոլի մանկապատանեկան առաջնություններում մասնակից թիմերի ավելացմանը:

3.2. ներդրումային ծրագիրն իրականացվելու է անմիջականորեն, կապալի, մատակարարման և այլ պայմանագրեր կնքելու միջոցով:

4. Ներդրումային ծրագրի գործողության ոլորտը, ներդրումային բյուջեն և իրականացման ժամանակահատվածը

4.1 սույն ծրագիրն իրականացվում է հետևյալ ոլորտներում՝ սպորտ, հանրակրթություն, զբոսաշրջություն, առևտրային գործունեություն:

4.2 սույն ներդրումային ծրագրի բյուջեն կազմում է 1,000,000,000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ,

4.3 սույն ներդրումային ծրագրի իրականացման համար նախատեսված 5 (հինգ) տարի ժամկետում ներդրողը ըստ տարիների նախատեսում է կատարել հետևյալ գումարի ներդրումները

1-ին տարի՝ 20,000,000 ՀՀ դրամ

2-րդ տարի՝ 500,000,000 ՀՀ դրամ

3-րդ տարի՝240,000,000 ՀՀ դրամ
4–րդ տարի՝ 120,000,000 ՀՀ դրամ
5-րդ տարի՝ 120,000,000 ՀՀ դրամ

5. Ներդրումային ծրագրի ֆինանսավորման աղբյուրները

1) սեփական և վարկառու միջոցներ՝ 1,000,000,000 ՀՀ դրամ:

6. Ներդրումային ծրագրով նախատեսված ֆինանսավորման ուղղությունները և ըստ ժամանակացույցի իրականացվող միջոցառումները

6.1. սույն ծրագրի շրջանակներում նախատեսված ֆինանսավորման ուղղություններն են

1) տարածքի բարելավմանն ուղղված՝ 800,000,000 ՀՀ դրամ (շինմոնտաժային աշխատանքների իրականացում),
2) մեքենասարքավորումների, տեխնիկայի և այլ գույքի ձեռքբերում՝ 150,000,000 ՀՀ դրամ,
3) տարածքի բարելավմանն ուղղված՝ 50,000,000 ՀՀ դրամ (այլ ծախսերի կատարում):

Տարածքի բարելավման ակնկալվող ներդրումներին վերաբերվում են միայն տարածքի վրա կատարվող և անբաժանելի բարելավում ապահովող միջոցները, որոնք էլ հիմք են հանդիսանում ներդրումային պարտավորությունների կատարումը հաստատելու համար:

6.2. Սույն ծրագրի շրջանակներում կազմակերպությունը ըստ ժամանակացույցի նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

Ծրագրի իրականացման 1-ին տարվա ընթացքում կատարվելու են նախագծային աշխատանքներ, սեյսմիկ և գեոդեզիական ուսումնասիրություններ, կապալառուների ընտրություն: 2-րդ տարում՝ Ավանի Աճառյան փողոց 20/4 հասցեում գտնվող ակադեմիայի խաղադաշտերի կառուցում, ակադեմիայի մասնաշենքի հիմնանորոգում, ենթակառուցվածքների կառուցում: 3–րդ տարում՝ ակադեմիայի մասնաշենքի հիմնանորոգում, ենթակառուցվածքների կառուցում: 4-րդ տարում՝ անհրաժեշտ սարքավորումների և տեխնիկայի ձեռքբերում, ակադեմիայի տարածքի բարեկարգում և կանաչապատում: 5-րդ տարում՝ սարքավորումների, տեխնիկայի և այլ գույքի ձեռքբերում, ակադեմիան կհասցվի նախագծված վերջնական տեսքին:

7. Ներդրումային ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները

Ներկայացվող ծրագրի իրագործմամբ ընկերությունը նախատեսում է անհատույց օգտագործման տրամադրվող տարածքում կապիտալ վերանորոգել 3,000մ² շինություն, որը իր մեջ կներառի մարզասրահ, 6 հանդերձարան, ադմինիստրատիվ մաս, և այլն, ինչպես նաև կառուցել 4 մարզադաշտ իր ենթակառուցվածքներով (մեկ՝ մեծ, մեկ՝ միջին և երկու՝ փոքր):

8. Ներդրումային ծրագրի իրականացման հետ կապված ռիսկերը

Ծրագիրի իրականացման ռիսկեր են համարվում վերոնշյալ միջոցառումների շրջանակներում շինարարական աշխատանքները իրականացնող կապալառուների կողմից ժամկետների ուշացումը, ինչպես նաև մատակարար ընկերությունների կողմից մատակարարման ժամկետների ուշացումը:

Հնարավոր ռիսկերի մեղմացման նպատակով ընկերությունը մտադրված է պայմանագրեր կնքել նոր կապալառուների և մատակարարների հետ:

Ծրագրի իրականացման ռիսկ է համարվում <<Յուվենտուս>> ֆուտբոլային ակումբի հետ կնքված

պայմանագրի գործողության դադարեցումը: Նշված ռիսկը մեղմելու նպատակով ընկերությունը մտադրված է անկախ <<Յուվենտուս>> ֆոտբոլային ակումբի հետ համագործակցության առկայությունից շարունակել տրամադրվող տարածքը ծառայեցնել իր հիմնական նպատակի համար:

Ծրագրի իրականացման ռիսկ է համարվում Երևանի քաղաքապետարանի կողմից շինարարական փաստաթղթերի տրամադրման ժամկետների ուշացումը:

Ընկերության միակ մասնակից-տնօրեն՝ Ալֆրեդ Սաղոյան

«ՆԵՔՍ ՋԵՆ ՍՊՈՐՏՍ» "NEXT GEN SPORTS" 02315867

ngensports@gmail.com +374 12 343434

www.ngensports.com 34 Garegin Nzhdeh street, Yerevan, Armenia (0006)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

30.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ